ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 28.06.2022թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «06» «12» 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Վեգա ուորլդ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 28.06.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով

- Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 40 հատ օդորակիչներից 31 հատ օդորակիչների մասով **5 735 000 (հինգ միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար)** ՀՀ դրամի չափով և 3-րդ չափաբաժնով նախատեսված 40 հատ օդորակիչներից 22 հատ օդորակիչների մասով **7 700 000 (յոթ միլիոն յոթ հարյուր հազար)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը,

- Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 40 հատ օդորակիչներից 1 հատ օդորակիչը և 3-րդ չափաբաժնով նախատեսված 40 հատ օդորակիչներից 11 հատ օդորակիչները 1 հատ կենտրոնացված ջեռուցման կաթսայով (1 415 000 (մեկ միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ) և 480 հատ կենտրոնացված ջեռուցման ռադիատորներով (մարտկոցներով) (2 592 000 (երկու միլիոն հինգ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ) փոխարինման անհրաժեշտությունը ու այդ նպատակով **4 007 000 (չորս միլիոն յոթ հազար)** ՀՀ դրամի չափով նախատեսված ֆինանսական միջոցների առկայությունը,

- վերոնշյալ փոփոխությամբ պայմանավորված Պայմանագրի ընդհանուր գնի վերանայման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 3.1 կետում 27 000 000 (քսանյոթ միլիոն) ՀՀ դրամ բառերը փոխարինել 26 972 000 (քսանվեց միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ բառերով,

1.2. Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում.

ա) «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» սյունակում 1-ին չափաբաժնի մասով՝ «7 400 000» թիվը փոխարինել «7 215 000» թվով, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ «14 000 000» թիվը փոխարինել «10 150 000» թվով,

բ) «ընդհանուր քանակը» և «ենթակա քանակը» սյունակներում 1-ին չափաբաժնի մասով՝ «40» թիվը փոխարինել «39» թվով, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ «40» թիվը փոխարինել «29» թվով,

1.3. Հաստատել կենտրոնացված ջեռուցման կաթսայի և կենտրոնացված ջեռուցման ռադիատորների (մարտկոցների) ձեռքբերման նպատակով կազմված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ»-ը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի,

1.4. Հաստատել կենտրոնացված ջեռուցման կաթսայի և կենտրոնացված ջեռուցման ռադիատորների (մարտկոցների) ձեռքբերման նպատակով կազմված «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի,

1.5. 15.07.2022թ. Կողմերի միջև կնքված N 1 համաձայնագրով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 3-ի,

1.6. Համաձայնագրի շրջանակում 1-ին չափաբաժնով ձեռքբերվող 31 հատ օդորակիչների և 3-րդ չափաբաժնով ձեռքբերվող 22 հատ օդորակիչների մասով մատակարարման ժամկետ սահմանել Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 6 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դպրական դեպարտամենտ	***Վեգա ուորլդ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 4/1
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02704414
Հ/Հ՝ 900011005841, 900011025757	Հ/Հ՝ 2050022244621001
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Մ. Պողոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«06» «12» 2022թ. կնքված N 2 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի			
հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	44621160/4	Կենտրոնացված ջեռուցման կաթսա	Ջեռուցման կաթսա BERG DUO 34՝ ջեռուցման մակերեսը՝ 240 քառ.մ, հզորությունը՝ 34 ԿՎտ, ներառյալ կաթսայի շահագործման համար անհրաժեշտ բոլոր նյութերն ու պահեստամասերը (184 հատ ռադիատոր SMART HF/500A4, խողովակ փ32՝ 48 մ, խողովակ փ25՝ 128 մ, խողովակ փ20՝ 56 մ, միացման դետալներ, փականներ (вентили)): Կաթսան պետք է լինի չօգտագործված: Կաթսայի տեղափոխումը, բեռնաթափումն ու տեղադրումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին: Կաթսայի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 2 տարի:
2	44621110/3	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ (մարտկոցներ)	Մետաղական ջեռուցման ռադիատորներ (մարտկոցներ) ROYAL THERMO INDIGO 500, աշխատանքային ճնշումը՝ 20 բար, չափսերը՝ 58.5x8x10 սմ, ջրի ծավալը սեկցիայի մեջ՝ 0.370 լ, քաշը՝ 1.35 կգ: Ջեռուցման ռադիատորները (մարտկոցները) պետք է լինեն չօգտագործված: Ջեռուցման ռադիատորների (մարտկոցների) տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին: Ջեռուցման ռադիատորների (մարտկոցների) համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի:

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841, 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Վեգա ուորլդ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 4/1
ՀՎՀՀ՝ 02704414
Հ/Հ՝ 2050022244621001
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Մ. Մաղոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«06» «12» 2022թ. կնքված N 2 համաձայնագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի							
հ/հ	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*
1	հատ	1 415 000	1 415 000	1	ք. Արթիկ, Բաղրամյան 40 (Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արթիկ քաղաքի նստավայրի վարչական շենք)	1	Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը:
2	հատ	5 400	2 592 000	480	ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9	480	Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը:

**Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841, 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Վեգա ուորլդ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 4/1
ՀՎՀՀ՝ 02704414
Հ/Հ՝ 2050022244621001
«Ինկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«06» «12» 2022թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									
ՀՀ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						Ընդամենը
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
ՀՀ՝ 900011005841									
1	39714220/504	1. Օդորակիչ 12000 BTU	925 000	925 000	925 000	925 000	925 000	1 295 000	**1 295 000**
2	39714230/503	2. Օդորակիչ 18000 BTU	3 360 000	3 360 000	3 360 000	3 360 000	3 360 000	3 360 000	**3 360 000**
3	39714240/505	3. Օդորակիչ 24000 BTU	1 750 000	1 750 000	1 750 000	1 750 000	1 750 000	1 750 000	**1 750 000**
4	44621160/4	Կենտրոնացված ջեռուցման կաթսա						1 415 000	**1 415 000**
5	44621110/3	Կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ (մարտկոցներ)						2 592 000	**2 592 000**
ՀՀ՝ 900011025757									
6	39714220/5	1. Օդորակիչ 12000 BTU						5 365 000	**5 365 000**

7	39714240/6	3. Օդորակիչ 24000 BTU						7 700 000	**7 700 000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841, 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Վեգա ուորլդ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 4/1
ՀՎՀՀ՝ 02704414
Հ/Հ՝ 2050022244621001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Մ. Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ